ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 1 - Ն

ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի «2018Թ. ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ, ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 20 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածների պահանջները՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դդմաշեն համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 13-ի «2018Թ. տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 20-Ն որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Դդմաշեն համայնքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ երկու հազար դրամ.

2) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար.

ա. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ 50 դրամ,

բ. Համայնքում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

բա) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ,

բբ) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 դրամ.

բգ) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 3 դրամ:

3) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ զրո դրամ, »:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ - 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Ավետիսյան Տիգրան

2. Հովհաննիսյան Գուրգեն

3. Ղարիբյան Էդիկ

4. Մելքոնյան Զավեն

5. Սարգսյան Ժաննա

Համայնքի ղեկավար՝ **Ավետիս Ավետիսյան**